



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

N 77

« 19 » հուլիս 2018թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՊԱՐՈՆ՝ Գ.ՄԻՐԻԶԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Այգեվան համայնքի ղեկավարի 2018 թվականի մայիս ամսվա որոշումներն ու կարգադրությունները:

Առդիր « 2 » թերթ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵՎԱՎԱՐ՝
Կատ.՝ Ռ.Կարապետյան



Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

« 17 » մայիսի 2018թ.

ԹԻՎ 2

ՂՐՈՇՈՒՄ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱՎԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԻՐԱՎՈՒՆՔ ՀԱՍՏԱՏՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ
ՉՊԱՅՊԱՆՎԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ԿԱՐԳՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ**

Արմավիրի մարզի Այգեվան համայնքի բնակիչներ Բենիկ Մաղաքյանը ծնվ. 02.01.1936թ. Արմենուհի Բենիկի Մաղաքյան ծնվ. 01.01.1971թ., Սանդուխտ Ծատուրի Շաֆրազյան ծնվ. 15.06.1944թ., դիմել է Այգեվան համայնքի 2 փողոց 24-րդ տան հասցեի իրավունքը հաստատող փաստաթղթերի չպահպանված անհատական բնակելի տան և շենք - շինությունների նկատմամբ իրավունքները վերականգնելու խնդրանքով:

Հաշվի առնելով, որ կառույցը իրականացվել է մինչև 1950թ.-ին, հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում::

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով «Տեղական ինքնա կառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության համայնքների վարչական տարածքներում իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել 17.10.2017թ. համայնքի ղեկավարի թիվ 2 որոշումը:
2. Վերականգնել Արմավիրի մարզի Այգեվան համայնքի 2-րդ փողոց 24-րդ տուն հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ քաղաքացիներ Բենիկի Մաղաքյան ծնվ. 02. 01. 1936 թ, Արմենուհի Բենիկի Մաղաքյան ծնվ. 01.01.1971թ, Սանդուխտ Ծատուրի Շաֆրազյան ծնվ. 15.06.1944թ, իրավունքը ճանաչելով նրանց սեփականության իրավունքը օրինական 0,07հա. հողամասի վրա գտնվող բնակելի տան 77,25 քմ. Կառուցված 1967թ.-ին, բնակելի տան 12,9 քմ. Կառուցված 1967թ.-ին բնակելի տան ծածկ 30,3քմ. Կառուցված 1967թ.-ին, լողարան կառուցված 5,2 քմ. Կառուցված 1967թ.-ին ավտոտնակ 24,5 քմ. Կառուցված 1967թ.-ին կայսայատուն 3,9 քմ. Կառուցված 1967թ.-ին, աստիճաններ 1,7 քմ. Կառուցված 1967թ.-ին:
3. Հաշվի առնելով, որ տնամերձ հողամասին կից 0,0127 հա ավել օգտագործված հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, անհատույց սեփականության իրավունքով հատկացնել Բենիկ Մաղաքյանին :
4. Առաջարկել Գ.Գ.Ա. Ա.Գ.Կ. Պ.Կ. համապատասխան ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ ՝ որ Բենիկի Մաղաքյան ծնվ. 02. 01. 1936 թ, Արմենուհի Բենիկի Մաղաքյան ծնվ. 01.01.1971թ, Սանդուխտ Ծատուրի Շաֆրազյան ծնվ. 15.06.1944թ սեփականության իրավունքները սույն որոշման 1,2 կետում նշված բնակելի տան և տնամերձ հողամասի նկատմամբ տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքով գրանցված վկայական :
5. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
«17» մայիսի 2018թ
Այգեվան համայնք



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՅԳԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

« 23 » մայիսի 2018թ

ԹԻՎ 3

ՀՈՂՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Աշոտ Վալոդյայի Վարոսյանի դիմումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արմավիրի մարզի Այգեվան համայնքում գտնվող Աշոտ Վալոդյայի Վարոսյանին սեփականության իրավունքով պատկանող 04-062-0131-0005 ծածկագրով 0,696 հա հողամասից ավել օգտագործվող 0,116 հա հողամասը տրամադրել անհատույց սեփականության իրավունքով: Հողամասը չի գտնվում հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում, սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ:
2. Այգեվան համայնքի ղեկավարի 22.12.2017 թ. թիվ 37 որոշումը համարել չեղյալ և հիմք ընդունել սույն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ